ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԵՎ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ք. Երևան, Հալաբյան փ. 41Ա
060-713-476

Ե-91989-2026

ԱՐՍԵՆ ԱՃԵՄՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՀԱՂԹԱՆԱԿ 3 Փ. 29

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 24 հուլիսի 2026 թ. տրված թիվ ԵԴ2/7346/02/26 կատարման ենթակա ակտի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնում 27 հուլիսի 2026 թ. հարուցվել են թիվ 15163459 և 15163455 կատարողական վարույթը:
Կատարողական վարույթներով պետք է Էլադա Մարատի Պողոսյանից և ԱՐՍԵՆ ԱՃԵՄՅԱՆ ԷԴՄԻԿԻ Ա/Ձ -ից համապարտության կարգով ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ -ի օգտին բռնագանձել 2.284.490 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ, ինչպես նաև «Կատարողական վարույթի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կայուն կատարողական վճար՝ 5.000 դրամ և նույն հոդվածով սահմանված կատարողական ծախս:
Բռնագանձումը տարածել գրավադրված գույքի, ինչպես նաև Պատասխանողներ Ա/Ձ Արսեն Էդմիկի Աճեմյանին և Էլադա Մարատի Պողոսյանին պատկանող այլ գույքերի վրա:
Կատարողական վարույթների շրջանակում արգելադրվել է պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Հաղթանակ 3փ. 29/2 բն անշարժ գույքը, որը ենթակա է հարկադիր իրացման:
Տեղեկացնում ենք, որ «Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)

2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ (որը կազմում է 34.000 ՀՀ դրամ) գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Ծառայության 900018007832 դեպոզիտ հաշվին:
Որպես տվյալ գույքի սեփականության մասնակիցներ տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին:
Միջնորդության բացակայության պարագայում գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (26.397.855 ՀՀ դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 21.118.284 դրամ:

Հարգանքով՝
ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

Վազգեն Գալումյան

Ստորագրող
ՎԱՉԳԵՆ ԳԱԼՈՒՄՅԱՆ
2903780064

2026-11-20 18:07:13 GMT+4
Հավաստված է ԵԿԵՆԳ-ի կողմից

Կատարող՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժին
Արուսյակ Կուրտիկյան
Հեռ.՝ 060713476 (00373)